

- 177 Յետ վերնագոյն կոչման շնորհի  
 Որ արար զիս արժան Սարգսի  
 Յայսմիկ պարտ եմ մեծի ջանի  
 Իմ Պետանեան հարազատի :
- 178 Ո՛վ նոյն աւուր երանական,  
 Յոր սոյն Սարգսի մեր բարեջան  
 Համբակ լինել գըտոյ պատկան,  
 Ըստ երկնային արնօրինման :
- 179 Առ նոյն թէպէտ իմ խակութիւն  
 Մընաց անհաս եւ աններհուն,  
 Առ ծուլութեան անձին իմ բուն,  
 Սակայն հոգիս գըտաւ արթուն :
- 180 Զի սոյն բաբուն խոհեմ է՝ ուշիմ  
 Յառնելն ինքեան զիս մըտերիմ  
 Զարթոյց ի քնոյ ըզհոգի իմ  
 Զոր առնել կիրթ չէր Յովակիմ :
- 181 Առանձնացեալ ապա Սարգսի  
 Ի միջագեղջ ըստ իւր սրբտի՝  
 Քարոզ կարգայր անդ ջանիւ լի  
 Ի կիրակէս, յաւուրս տօնի :
- 182 Անդէն կային տունք իշխանաց,  
 Ամիրայից երեւելեաց,  
 Որք սերտ սիրով սըրտի իւրեանց  
 Տային նրմա շուք յարգանաց :
- 183 Ուր մանաւանդ զարմ Զօպանեան,  
 Եւ Սիմէօն որ Աստուրեան,  
 Եւ այլ ոմանք նոցին նրման  
 Զօնէին միշտ նրմա օճան :